

ԿՈՄԻՏԱՍԻ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

1897



[1896, դեկտեմբերի վերջ], հունվարի սկիզբ - Կոմիտասը ստանում է Կ. Կոստանյանի՝ Վաղարշապատից գրած նամակը: Չի պահպանվել:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 84:

Նույն օրերին, Բեռլին - Կոմիտասը հիվանդանում է. «Երկու շաբաթ սաստիկ ջերմով բռնուած» է լինում եւ չի կարողանում պատասխանել այդ օրերին ստացած Կ. Կոստանյանի նամակին:

Նույն տեղում:

Հունվար [1 - 13], Բեռլին - Կոմիտասը Վաղարշապատից ստանում է Կ. Կոստանյանի՝ իր Նոր տարին շնորհավորող տոմսը:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 84:

Հունվար 14, Բեռլին - Կոմիտասը նամակ է գրում Վիեննա՝ Մխիթարյան միաբանության «Նանդէս ամսօրեայ» պարբերականի տպարանական խորհրդին: «Խոնարհաբար խնդրում եմ, - ասված է նամակում, - եթէ կարելի է պատուական հանդէսիդ 1896[թ] դեկտեմբեր, ապա շարունակաբար, բացի 95-ի մարտ, ապրիլ համարներեն, առաքել, որոնց մէջ հայոց հին երաժշտութեան մասին յօդուած կայ տպուած»:

Կոմիտասի մտահոգության առարկան Տրդատ Պալյանի «Նայկական երաժշտութեան նորագիտ դասագիրք մը» խորագրով հոդվածն է, որը տպագրվել է ամսագրի 1895 - ի 65 - 68, 123 - 124 եւ 1896 - ի 353 - 354 էջահամարներում:

«Գրական թերթ», Ե., 1991, թ. 18:

Հունվար 15, Վաղարշապատ - Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը հանձնարարում է ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին Բաքվի հայոց Մարդասիրական ընկերությունից ստացվող կրակադրամագլխի տոկոսից նպաստ հատկացնել Կոմիտաս, Հուսիկ եւ Եզնիկ վարդապետներին, որոնք սովորում են Գերմանիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

«Էջմիածին», Ե., 1948, թ. 1-2, էջ 58:

Նունվար [երկրորդ կեսի սկիզբ], Բեռլին - «Մինգակադեմիայի» երաժշտասրահի մեջ Կոմիտասը ներկա է լինում Գրելլիի «Տասնվեց ձայն պարարագի» Բլումների ղեկավարած երկսեռ երգչախմբի համերգին: Մեծ է լինում Կոմիտասի սրացած քաղաքությունն ու հիացումը, եւ նա գրում ու «Արարար» անսագրի խմբագրությանն է ուղարկում «Տասն եւ վեց ձայն երգեցողութիւն պարարագի» խորագրով հոդվածը:

«ԱՐԱՐԱՏ», Վաղարշապատ, 1897, թ. 2, էջ 64 – 65:

Նունվար 27/15, Բեռլին - Գերմանիայում սովորող Կոմիտասը նամակ է գրում Վաղարշապատ, ճեմարանի փեսուհի Կ. Կոստանյանին. «Յիրաւի, Նոր փարի է ինձ ուսման վայրում գտնուելը. իմ փօները եւս,- գրում է նա,- լայնածաւալ երաժշտական աշխարհի բազմազան երկրների մէջն են փօնում, իւրաքանչիւր ժամն ու րոպէն աչքիս առաջ պարզում են մի ապագայ փեսարան՝ լիովի անսպառ գործունէութեան հոգածութեամբ:

... Քանի խորունկն են մտնում երաժշտական ծիծաղածին ծովի մէջ, նույնքան պնդում է համոզմունքս, թե մեր եւ՛ ժողովրդական, եւ՛ եկեղեցական աննման ու վեհ եղանակները, որոնք քոյր եւ եղբայր են շա՛ւր վաղուց... արմարը շար խորն հնութեան է փանում հասցնում, մինչեւ հայի ծագումը, այսփեղ նորանից անբաժան, ծլում եւ նորա հետ է մեզ հասնում:

Ուսուցչապետս,- շարունակում է նա,- միշտ կրկնում է. Դուք սփռեղծել էք ազնիւ եւ ինքնուրոյն ոճ, որ կարմիր գծի պէս ձեր ամբողջ գրուածքների եւ շարադրութեանց մէջ պայծառ անց է կենում, այդ ոճը ես անուանում եմ հայկական ոճ, որովհետեւ մեր երաժշտական ծանօթ աշխարհի համար նորութիւն է:

Մեր ազգային հին երգերին ազգային եղանակ յարմարեցնելու միտքը իմ մէջ եւս ծագել էր, եւ այդ գլուխ կարող է գալ, բայց շարականի եղանակների եւ բանաստեղծության փաղաչափական եւ շեշտական կանոնները պարզելուց յետոյ, որովհետեւ եղանակների շեշտադրութիւնը գրեթէ չի համաձայնում լեզուի արդի շեշտադրութեան կանոններին եւ գործածութեանը. ինձ թւում է, թէ մեր նախնիք այլ կերպ են շեշտադրութիւն ունեցել: Նուագոյն եւ հեղինակներն անյայտ շարականների փաղաչափութիւնը շար հետաքրքրական է, որ բաւական պարզուեցաւ ինձ համար, որովհետեւ երաժշտական շեշտադրութիւնը պահուած է երեսում, որին կից է եւ լեզուինը»:

Անդրադառնալով իր վիճակին՝ Կոմիտասը գրում է. «...եւ չափազանց նեղում եմ ապրուստի կողմից, յաճախ փկարանում եմ. սնունդս ոչինչ է, զբաղմունքս շար. մաշուել ու կնախք եմ դարձել, կարծեմ վերջս այդպիսով կորուստ կլինի»:

Այնուհետեւ Կոմիտասը խորհուրդ է փալիս եւ խնդրում է, որ «ինչքան կարելի է մեղմաձայն երգեցողութեան ընթելացնեն աշակերտներին», խնդրում է Մաքենադարանի թ. 1700 ձեռագրից արտագրել փալ եւ իրեն ուղարկել Սամուել Անեցու «Նոտրագիր գիտելիքներ ձայների եւ երգերի մասին» հափվածները: Խնդրում է նաեւ «Արեւելք» լրագրի 1896 թվականի 5600-րդ համարը: Նամակում զգալի փեղ է հափկացված ուսման վարձի եւ նյութական դժվարությունների հետ կապված հարցերին:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 84 – 85:

Փեփրվար, Վաղարշապատ - Մայր Աթոռի քաղաքանում լույս է փնտնում «Արարար»

ամսագրի հերթական համարը, որպեսզի հրապարակում է Կոմիտաս վարդապետի Բեռլինից խմբագրությանը ուղարկած «տասն եւ վեց ձայն երգերցողության պարարագի» վերնագրով հոդվածը՝ տպագրված Կոմ[իտաս] վ[արդապետ] ստորագրությամբ:

«Երեք «տերողորմիաները», - ասված է հոդվածում, - սկսում են մեղմիկ միայնակ երգեցողութեամբ, որ մերթ Ընդ մերթ բարեխառնում է ամբողջ խումբը:

Ինչպիսի՛ վեհագույն, հիասքանչ վայելչությամբ վեր է սլանում, ապա «Փառք ի բարձունս». ինչպիսի՛ երկյուղածությամբ եւ հույսով թրթռում է քրիստոնեի սիրտը, երբ «Նավաբանքի», «Չարչարեալ, խաչեալ, թաղեալ»-ի խորախորհուրդ խոսքերը տխրահույզ ալիքներով պատում են նորան, ինչպիսի՛ զուարթությամբ եւ բաւականությամբ լցւում է հոգին եւ ինքնաբեր ուրախութեամբ եւ բավականութեամբ լցվում է հոգին եւ ինքնաբեր ուրախառիթ ժպիտ է ցոլում դեմքի վրա, երբ լսում է հարութեան փողը:

Բայց հայ մարդու ուրախութիւնն ավելանում է եւ կտրծքը փքում է արդար հպարտութեամբ, երբ լսում է «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր Զորութեանց» սերովբեական փառաբանությունը, նա մոռանում է բոլոր նախկին տպավորութիւնները... տեղափոխվում է հոգեպես հասարակիմն... Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կամարների տակ եւ լսում հայ քրիստոնեի երգած «Սուրբ, Սուրբ, Սուրբ...»-ը:

«Արարար», 1897, թ. 2, էջ 64-65:

Մարտ 12/24, Բեռլին - Կոմիտասը նուրագրում է «Դու հարցնում ես» ռոմանսը (ձայնի համար, դաշնամուրի նվագակցությամբ): Խոսք՝ Յոհաննա Ամբրոսիոսի (բնագիրը՝ 3 թերթ):

ԶԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 537:

Ապրիլ 19/7, Բեռլին - Կոմիտաս վարդապետը գրախանութից գնում է Բախի «Մեսսա հոմոլ» (կլավիր) եւ «Մարթեոսի պաֆֆիոնը» (կլավիր), նաեւ Մենդելսոն «Երգեր խառն երգչախմբի համար» գրքերը:

ԶԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 817, 819, 1275:

[Մարտ-ապրիլ], Բեռլին - Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցի եւ Ֆրեդերիկ Վիլհելմ համալսարանի փիլիսոփայական բաժնի ուսանող Կոմիտաս վարդապետը գրում է «Արարար» ամսագրի խմբագրություն է ուղարկում «Նայոց եկեղեցական երաժշտությունը ԺԹ դարում, Ա շրջան. 1839 – 1874» վերնագրով հոդվածը:

«Արարար», Վ. 1897, թ. 5, էջ 221-225:

Մայիս 14/26, Բեռլին - Կոմիտասը նամակ է գրում Կարապետ Կոստանյանին եւ հայտնում է, որ ամառային վեցամսյակում դասախոսություններ է լսում համալսարանում եւ մասնավոր դասեր է առնում Ռիխարդ Շմիդտից: Խոսելով իր հաջողությունների մասին՝ նա Կոստանյանին տեղյակ է պահում, որ արդեն կարողանում է լարային քառյակի համար երգեր հորինել, հայտնում է նաեւ, որ «եկեղեցական երաժշտութեան տեսականն ամբողջապես վերջացրել է» եւ զբաղվում է միայն գործնականով: Կոմիտասը գանգաւորվում է, որ դաշնակահարությունը տանջում է իրեն: «Մարներս այնպես են ամրացել, - գրում է նա, - որ ուղիղ անսայթաք եւ պարշաճաւոր դասաւորութիւն դեռ չեմ կարող անել, շատ անգամ էլ

յուսահապում եմ, բայց եւ այնպես պէտք է ձեռք բերել եւ այդ ճյուղը, որ անհրաժեշտ է»:
Նամակից հայրնի է դառնում, որ նրա առողջությունը վատ է, «կաղեկաղ է»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 87-88:

[Նունվար- մայիս], Բեռլին - Կոմիտասը հայկական հոգեւոր երգերից մի քանի կտոր մշակում է քառաձայն, վեցձայն եւ ութձայն երգչախմբերի համար: Ռիխարդ Շմիդտը առաջարկում է այդ եղանակները մի քանիսով լրացնել, որից հետո խոսքն անում է երգել փալորել եկեղեցում, կամ Singakademie-ում (երգի ակադեմիայում) իբրեւ հոգեւոր երգեր:

Նույն տեղում:

Մայիս, Վաղարշապատ. - «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է Կոմիտասի «Նայոց եկեղեցական երաժշտությունը ԺԹ դարում: Ա շրջան 1839 – 1874» խորագրով հոդվածի սկիզբը՝ Կոմիտաս վարդապետ ստորագրությամբ:

(Հոդվածի շարունակությունը չի հրապարակվել):

Կոմիտաս, Հոդվածներ եւ ուսումնասիրություններ, Ե., 1941, էջ 126-136:

Հունիս 21, Վաղարշապատ - Ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանը թ. 151 զեկուցագրով հավասարում է, որ, կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի 1897 թվականի հունվարի 15-ի կարգադրության համաձայն, Գերմանիայի համալսարաններում սովորող Կոմիտաս, Նուսիկ եւ Եզնիկ վարդապետներին, ըստ 1896 թվականի հուլիսի 4-ի կոնդակով սահմանված կարգի, Բազմի հայոց մարդասիրական ընկերության կողմից ստացվող կրակադրամագլխի տոկոսից (տե՛ս 1896 թ. հուլիսի 3-ի գրառումը) կատարել է վճարումներ. «Բարեշնորհ Կոմիտաս վարդապետին, - ասված է զեկուցագրի մեջ, -- առաքվեցաւ ի Բեռլին գումար չորս հարիւր ռուբլի ի պէտս ծախուց սկսեալ յօգոստոս ամսոյ 1896 ամի ց վախճան նոյեմբեր ամսոյ փարոյս իբրեւ նպաստ ի յաւելումն ամսական թոշակին զոր ընդունի ի մեծն պ. Յովհաննու Մանթաշեան»:

«Էջմիածին», 1948, թ. 1 - 2, էջ 58:

Հուլիս 4/23, Բեռլին - Կոմիտասը գրախանութից գնում է Վազների «Լոհենգրին» օպերայի կլավիրը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 1291:

Հուլիս 8/20, Բեռլին - Կոմիտասը գրախանութից գնում է Գրելլի «Միսսա Սոլեմիս» գիրքը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 1296:

Հուլիս 10/22, Բեռլին - Կոմիտասը գրախանութից գնում է Մենդելսոնի «Դուետներ», Նենդելի «Մեսիա» (օպերայի կլավիր) եւ Բայոյի «Մեսիաներ» գրքերը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 1297, 1298, 1294:

Հուլիս 27/15, Բեռլին - Կոմիտասը գրախանութից գնում է Բեթհովենի «Մեսսա

Սոլեմիս» (կլավիր), Վազների «Տանհոյզեր» (կլավիր) եւ Լ. Բուսերի «Երաժշտության պարմություն» (Բեռլ. 1882) գերմաներեն գրքերը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 1303, 1292, 1010:

Նույիս 28, Բեռլին. - Կոմիտասը նամակ է գրում Վիենայի Միսիթարյան միաբանության մապենադարանապետին. «Խոնարհաբար խնդրում եմ,-- ասված է նամակում,- եթե կարելի է, Մապենադարանիդ մեջ գտնված Գրիգոր Գապասախալյանի «Գիրք երաժշտական», «Նուագարան երաժշտական» եւ «Գրքոյկս կոչեցեալ երգարան» տպագրված գրքերը մի ամիս ժամանակով ինձ ուղարկելու հրաման ուղարկեիք, որով չափազանց երախտապարտ կմնամ Ձեր առաջ:

Մեկ ամիս հետո ապահովեալ կվերադարձնեմ Ձեզ»:

«Գրական թերթ», Ե., 1991, No 18:

Նույիս 30, Բեռլին - Կոմիտասը նույնագրում է «Փոթորկի առասպելը» սրբեղծագործությունը (երգ դաշնամուրի նվագակցությամբ): Խոսք՝ Ն. Լենատի, բնագիրը 3 թերթ):

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 546:

Օգոստոս 20/8, Բեռլին - Կոմիտասը գրախանութից գնում է Վերդիի «Աիդա» օպերայի կլավիրը եւ Նելսոնի «Չայնազգացումների ուսմունքը» վերնագրով գրքերը:

ՉԱԳԱԹ, Կոմիտաս, ֆ., 1305, 95:

[Ապրիլ-սեպտեմբեր], Բեռլին - Կոմիտասը Ֆրեդերիկ Վիլիելմ համալսարանում լսում է հետեւյալ դասախոսությունները.

1. Միջնադարի երաժշտության պարմություն՝ սկսած քրիստոնեության սկզբնավորումից:
2. Ֆրանսիական ու նիդերլանդական երաժշտության պարմություն:
3. Եկեղեցական երաժշտության պարմություն:
4. Երաժշտական վարժություններ թագավորական երաժշտական գործիքների հավաքածուով:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 87:

Նույն շրջանում, Բեռլին - Կոմիտասը ուսուցչապետ Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցում լսում է դասախոսություններ հետեւյալ առարկաներից.

1. Ձեաբանություն
2. Դաշնամուր (վարժություններ)
3. Արդիական երաժշտություն

Նույն տեղում:

[Նոկտեմբեր], Բեռլին- Կոմիտասը Ռիխարդ Շմիդտի հսկողությամբ երգեցողության դասեր էր փալիս նրա երաժշտանոցի նախապարաստական դասարաններում եւ վարժվում էր «խումբ կազմելու, պարաստելու, կառավարելու» արվեստի մեջ:

Նույն տեղում:

Նոկտեմբեր 25/6, Բեռլին- Կոմիտասը Սիրեկան Տիգրանյանից ստանում է նամակ եւ Նիկողայոս Տիգրանյանի աշխատություններից մի քանի օրինակ:

Այդ աշխատություններից մեկական օրինակ վերցնում է իրեն, իսկ մյուսները, ըստ հանձնարարության, փալիս է «ծանոթ ուսուցչապետերին»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 173:

Նույն օրը, Բեռլին - Կոմիտասը պարաստական նամակ է գրում Սիրեկան Տիգրանյանին:

Տեղյակ պահելով Նիկողայոս Տիգրանյանի հոդվածների ստացման մասին՝ նաեւ հայտնում է, որ դրանցից մի քանիսը «մատուցել է ծանոթ ուսուցչապետերին», որոնց կողմից հայտնում է նրանց «շնորհակալությունն ու գոհունակությունը»:

Շարունակության մեջ Կոմիտասը առաջադիմություն է մաղթում նրա եղբորը՝ Նիկողայոս Տիգրանյանին՝ «ժողովրդական անգին եղանակների գանձարանը օտարների ուշադրութեանը» ներկայացնելու համար:

Նույն տեղում:

[Նոկտեմբեր 29/10, նոյեմբեր], Բեռլին - Կոմիտասը նամակ է գրում Կարապետ Կոստանյանին եւ հայտնում է, թե ինչ դասախոսություններ է լսելու առաջիկա վեցամսյակի ընթացքում: Նամակում Կոմիտասը իր երախտագիտությունն է հայտնում Ռիխարդ Շմիդտի վերաբերմունքի համար: «Իմ ուսուցչապետս,-- գրում է նա ,-- մի փարուայ ընթացքում ինձ այնքան առաջ փարաւ երաժշտութեան մեջ առհասարակ, որքան 6 փարում չեն անցնում այսպեղի պետական երաժշտանոցում անգամ»:

«Ուսուցիչս,- շարունակում է Կոմիտասը,- իր երաժշտանոցում, պարաստական դասարաններում դասեր է նշանակել, իր հսկողութեան փակ երգեցողութեան դասեր են փալիս եւ խումբ կազմելու, պարաստելու, կառավարելու վարժում, որ չափազանց շահաւետարարյունքների է հասցնում իմ փորձառութիւնս»:

Վերջում Կոմիտասը խնդրում է արագացնել նպաստադրամի առաքումը, որպեսզի կարողանա պարտքերը վճարել:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 88-89:

Նոյեմբեր, 1/13, Բեռլին - Կոմիտասը գրախանութից գնում է Մենդելսոնի «Պողոս» վերնագրով օրափորիան:

ԶԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 1276:

Նոյեմբեր 15, Թիֆլիս - «Մշակ» լրագրի հերթական համարում լույս է տեսնում Կարա-Մուրզայի «Նամակ խմբագրութեանը» վերնագրով հոդվածը՝ նվիրված Եկմալյանի «Պարարագին»:

«Մ. Եկմայանի այդ «երգեցողութիւնքը», - ասված է Կարա-Մուրզայի նամակում, -- թէ՛ հիանալի եւ թէ՛ զարմանալի գրուածք է: Ձայների միութեան մէջ հիանալի ներդաշնակութիւն է լսում ամեն տեղ եւ զարմանալի գեղարուեստական հմտութեամբ է գրուած, ամեն բան թէկուզ լինի եւ ոչ երոպական, որը շատ դժուար է: Միեւնոյն ժամանակ պահուած է եղանակների ճշտութիւնը... Սա կարելի է համարել պ. Եկմայեանի գլուխգործոցը, որով նա լրացրեց եկեղեցական երգեցողութեան այն պակասութիւնը, որ գնալով աւելի եւ աւելի զգալի էր լինում մեզանում»:

«Մշակ», 1897, թ. 134, էջ 4:

Նոյեմբեր, Բեռլին - Օսկար Ֆլայշերը իր «Նեւների (խագերի - Խ. Ս.) ծագման եւ վերձանման մասին» խորագրով գրքի առաջին հատորը (Լեյպցիգ, 1895) «Պարոն Գեորգեան վարդապետին՝ ուրախութեամբ հիշելու համար» մակագրությամբ նվիրում է Կոմիտասին [հոկտեմբեր] 10/22:

Նոյն շրջանում Կոմիտասը գրախանութից գնում է այդ գրքի երկրորդ հատորը (Բեռլին, 1897):

ԶԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 974:

Մայիս-դեկտեմբեր, Բեռլին - Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցում սովորող Կոմիտաս վարդապետը այդ ժամանակահատվածի սկզբում «ամբողջապես աւարտում է «եկեղեցական երաժշտութեան տեսականը» եւ սկսում է զբաղուել միայն «գործնականի ուսումնառութեամբ»: Նաջորդող ժամանակամիջոցում իբրեւ ուսումնառության առաջադրանք նա ստեղծագործական վերաբերմունք է հանդես բերում եկեղեցական երաժշտության «միայն գործնականի հանդէպ, եւ քանի որ նրա հոգու խորքում տակաւին թարմ էին Արեւմտյան Նաաստրանում տեղի ունեցած կոտորածների հետեւանքները, Կոմիտասը ստեղծագործական մոտեցում է հանդես բերում 137-րդ Սաղմոսի հանդէպ եւ իրականացնում է «An den wasser zu Babel» (Առ գետս Բաբելացոց) խորագրով սաղմոսերգությունը:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 87:

Կոմիտաս, ԵԺ, հտ. 4, Ե., 1976, էջ 39-46:

Այս ստեղծագործության ծանոթագրության մէջ (Կոմիտաս, ԵԺ, հտ. 4, էջ 168) «Սաղմոսի» գրության ծանոթագրողը վերագրում է 1896 թվականի հոկտեմբեր – նոյեմբեր ամիսներին, այն դեպքում, երբ Կոմիտասը գտնվում էր ուսումնառության նախնական շրջանում, տակաւին մի քանի ամսվա աշակերտ էր Ռիխարդ Շմիդտի երաժշտանոցում:

[Տարվա երկրորդ կես], Վիեննա, Լայպցիգ - Միխայրյան միաբանության տպարանում լույս է տեսնում Մակար Եկմայանի ձայնագրած «Երգեցողութիւնք սրբոյ պատարագի Նայաստրանեաց Առաքելական եկեղեցոյ: Փոխադրեալ եւ ներդաշնակեալ, երիս եւ չորիս ձայնա...»:

Լայպցիգ – Բրայկոպֆ եւ Ներտել, Վիեննա, Միխայրյան տպարան, 1896, 20-265 էջ:

Տարվա ընթացքում, Բեռլին - Ուսուցչապետ Ռիխարդ Շմիդտը իր երաժշտանոցի «պարրաստական դասարաններում» դասաժամեր է հարկացնում Կոմիտաս վարդապետին: Նրա հսկողության տակ Կոմիտասը երգեցողության, ապա նաև հարմոնիայի դասեր է տալիս ու վարժվում է խումբ կազմելու եւ կառավարելու մեջ:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 89:

1898

Նունվար, Բեռլին - Գրաքննադատ, լեզվաբան Գրիգոր Վանցյանը (1870 – 1908), Բեռլինի Երաժշտական ճեմարանում ծանոթանալով Եկմալյանի կողմից իբրեւ նվեր ճեմարան ուղարկած «Պարարագի երգեցողութիւն» վերնագրով աշխատությանը, գրում եւ «Մուրճի» խմբագրությանն է ուղարկում «Եկմալեանի ներդաշնակած «Պարարագի երգեցողութեան» առիթով» վերնագիրը կրող գրախոսականը:

Բանախոսության վերջում փողապակի ծանոթագրության մեջ նա հարկ է համարում հրապարակել մի ծանոթագրություն: «Բեռլինում,- գրում է նա,- մի հմուտ եւ ձեռնհաս անձի կողմից (մեր համոզմամբ նկատի ունի Կոմիտաս վարդապետին - Խ. Ս.) պարրաստում է քննադատութիւն այդ գործի ներքին եւ արտաքին առավելութիւնների եւ պակասութիւնների մասին»:

«Մուրճ», 1898, թ. 4, էջ 535:

Նունվար, Վիեննա.- Լույս է տեսնում «Նանդէս ամսօրեայ» հայագիտական պարբերականի հերթական համարը: «Այլեայլք, նոր հրապարակութիւնք» խորագրի տակ հրապարակվում է հաղորդագրություն՝ Մակար Եկմալյանի հեղինակած «Երգեցողութիւնք սրբոյ պարարագի» խորագրով գիրքը լույս տեսնելու մասին:

Ամսագրի խմբագիր Գ. Մենելիշյանը մի քանի փողով անդրադառնում է այս գրքին. «...Ներդաշնակութիւնը,- գրում է նա,- շատ լաւ է եւ պատիւ պիտի բերէ պր. Եկմալեանին», «եղանակների աւելորդ դարձվածներէն զտուած են, բայց երբեմն զարդերէն ալ եւ որով փեսակ մը միօրինութիւն կտիրէ քանի մը երգերու մէջ, մանավանդ վերջավորութեանց մէջ...»:

«Նանդէս ամսօրեայ», Վ., 1898, թ. 1, էջ 26:

Փետրվար 12, Բեռլին - Կոմիտասը նամակ է ստանում Մակար Եկմալյանից: Վերջինս Կոմիտասին խնդրում է հարցում անել եւ փեղեկություն հաղորդել իրեն, թե արդյոք «Մխիթարեան հայրերը ստացել են իր ուղարկած «Պարարագի արարողութիւնը» գիրքը:

«Գրական թերթ», Ե., 1991, թ. 18:

Նույն օրը, Բեռլին - Կոմիտասը նամակ է գրում Վիեննա, Մխիթարյան միաբանության անդամ Գաբրիել վարդապետ Մենիվեշյանին: Տեղյակ պահելով Մ. Եկմալյանից ստացված նամակի մասին՝ խնդրում է նրան մի երկրորդով իմացում տալ Եկմալյանին, նրա ուղարկած «Պարարագի» ստացման վերաբերյալ:

Նույն փեղում:

Փետրվար 15/3, Բեռլին - Կոմիտասը գրախանութից գնում է Բոստոնյանի «Երգեր, ձայնի խանգարումներ», Գ. Ավելիսի «Երգեցողության բժիշկը», Վայնհարսների «Դիրիժորության մասին», Շուլց – Շպրեյլիցի «Երգի դասավանդման մասին» եւ «Երգի այբբենարան», Օ. Գուրմանի «Ձայնավարություն», Ա. Ջանդերբերգի «Ձայնամարզություն», Լենա – Կալիշի «Ժամանակակից երգեցողության արուեստը» եւ Յ. Պետերսոնի «Դասարարականություն երաժշտության միջոցով» գերմաներեն գրքերը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 828, 889, 871, 999, 954, 993, 976, 1002:

Փետրվար 25/13, Բեռլին - Կոմիտասը նույնպես է «Ծիծեռնակ» երգը (ձայնի համար՝ դաշնամուրի նվագակցությամբ): Խոսքը՝ հայերեն - Գ. Դոդոյանի:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 518:

Մարտ [1-15] Վիեննա - «Նանդես ամսօրեայ» պարբերականի խմբագիր Գ. Մենեիշյանը, «Բիզանդական պարբերագիր» հանդեսի մեջ կարդալով Նիկողայոս Մառի գրախոսականը՝ ուղղված Գալուստ Տեր-Մկրտչյանի «Ազաթանգեղոսի աղբերաց քննադատությունը» խորագրով հոդվածի դեմ, որոշում է Մառի այդ հոդվածի թարգմանությունը տպագրել «Նանդես ամսօրեայ» պարբերականի մեջ:

Այս առիթով նա մի նամակով դիմում է Բեռլինի երաժշտանոցում սովորող Կոմիտաս վարդապետին եւ առաջարկում է նրան ռուսերենից հայերեն թարգմանել Ն. Մառի վերոհիշյալ հոդվածը:

«Նանդես ամսօրեայ», 1898, No 44 էջ 121:

«Գրական թերթ», 1991, թ. 18, Կոմիտասի մարտի 21-ի նամակը:

Նույն շրջանում, Բեռլին - Կոմիտասը ուսուցչապետ Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցում լսում է հետևյալ դասախոսությունները.

1. Ձեռքանություն
2. Երգահանություն
3. Դաշնամուր
4. Բազմաձայնություն

Նույն տեղում, էջ 89:

Մարտի 21, Բեռլին - Կոմիտասը նամակ է գրում Վիեննա՝ «Նանդես ամսօրեայ» հայագիտական պարբերականի խմբագիր Գաբրիել Մենեիշյանին: Տեղյակ պահելով նրա ուղարկած նամակի սրացման մասին՝ պատրաստականություն է հայտնում իր «ծառայությունը մատուցել» նրան:

«Խնդրեմ,- շարունակության մեջ գրում է Կոմիտասը,- հաճեցեք փութով առաքելու հիշեալ տետրակը»:

Խոսքը թարգմանելու նպատակով առաքվող Նիկողայոս Մառի հոդվածի մասին է:

Խ. Ս.:

«Գրական թերթ», Ե., 1991, թ. 18, մարտի 21-ի նամակը:

Մարտ, ապրիլի սկիզբ, Վիեննա - Լույս է տեսնում «Նանդես ամսօրենայ» պարբերականի հերթական համարը: «Նոր հրապարակությունք» խորագրով ենթավերնագրի տակ հանդեսի խմբագիր Գ. Մենեիշյանը, խոսելով «Բյուզանդական պարբերագրի» մեջ տեղ գրած Նիկողայոս Մառի «Ազաթանգեղոսի աղբիւրաց քննադատություն» գրախոսականի մասին, կարեւոր է համարում Մառի այդ ուսումնասիրությունը եւ ընթերցողներին խոստանում է հարմար առիթով իր ամսագրում ամբողջովին առաջ բերել այդ գրախոսականը:

«Նանդես ամսօրենայ», 1898, թ. 4, էջ 121:

Մարտի վերջ, ապրիլի սկիզբ, Վիեննա - «Նանդես ամսօրենայ» պարբերականի խմբագիր Գ. Մենեիշյանը Կոմիտասին է ուղարկում Նիկողայոս Մառի՝ Գալուստ Տեր-Մկրտչյանի (Միաբանի) «Ազաթանգեղոսի աղբյուրներից...» («Արարատ» 1896, թ. 8, էջ 385) հոդվածի դեմ հրապարակած գրախոսականի ռուսերեն բնագիրը:

Նամակը չի պահպանվել:

«Գրական թերթ», 1991, թ. 18, ապրիլի 16-ի նամակը:

Մարտ – ապրիլ, Վաղարշապատ - «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է Կոմիտասի «Երգեցողությունք Ս. Պապարագի: Փոխադրեալ ի խազա երոպականս եւ ներդաշնակեալ ի ձեռն Մ. Եկմալեան. տպագրեալ արդեամբք Պ. Մեղուինեան: Լայպցիգ Բրեյարկոպֆ եւ Ներպել, Վիեննա, Միսիթարեան տպարան, 1886» խորագրով գրախոսականը Մ. Եկմալյանի հրապարակած Պապարագի վերաբերյալ:

«Վերջերս լոյս տեսաւ, - գրում է Կոմիտասը, - յարգելի երաժիշտ պ. Մակար Եկմալեանի այս մեծածաւալ գործը: Ներդաշնակած է երեք տեսակ. ա. եռաձայն, բ. քառաձայն եւ գ. քառաձայն. ա. եւ բ. արական, իսկ գ.՝ խառն խմբի համար»:

Մեջբերելով Եկմալյանի դրույթները եւ իր համաձայնությունը հայտնելով դրանց հանդեպ՝ Կոմիտասը հարկ է համարում անել մի շարք դիտողություններ.

«Մեր եկեղեցական եղանակները, - շարունակում է Կոմիտասը, - ոչ մեկն էլ ելեւէջ չունին, այլ կազմուած են քառեակների դրութեամբ:

Յայտնի է, որ բոլոր ազգերն էլ նախ երգեցին, ապա նուագեցին. առաջ երգեցողությունը, հետո նվագածությունը առաջ եկաւ. առաջ կարողացան ձայնաստիճանը որոշել, զանազանել, ապա նուագարանի վրա յաստատեցին»:

«Քառեակների դրութեամբ է յօրինուած եւ մեր թէ՛ ժողովրդական, թէ՛ եկեղեցական եղանակները, որոնք քոյր-եղբայր են եւ նոյն կազմութիւնն ունին: Քառեակների դրութեան չենթարկուողներն օտարամուտ են: (Քառեակների դրութիւնն առաջին անգամ մենք ենք նկատել մեր եկեղեցական եւ ժողովրդական երաժշտութեան մէջ. մանրամասնութիւնը մտադիր ենք մի առանձին ուսումնասիրութեամբ հրապարակել)»:

«Թող ներուի... շեշտել, որ մեր երաժշտութիւնն էլ յուր ամբողջ ազգային ոգովն եւ ոճովն նոյնքան **արեւելեան** է, որքան պարսիկ – արաբացին. բայց ո՛չ պարսիկ – արաբացին մերն է, եւ ո՛չ էլ մերը նորա մի մասն է. այլ խնդիր է, թե նոցա ազդեցութեանն է ենթարկուել: Ճիշտ այնպէս, որպէս մեր լեզուն հնդեւրոպականի մի ճիւղն է, այնպէս են եւ պարսկերէնը, քրդերէնը, գերմաներէնը եւ այլն, բայց մեր լեզուն ո՛չ գերմաներէն, ո՛չ քրդերէն եւ ո՛չ էլ պարս-

կերէն է: Մեր եւ միւս արեւելեան եղանակների զանազանութիւնն այն է, որ նոքա քառեակի պարածութիւնը մեծացնում ու փոքրացնում են, մենք առնում ենք մի պարզ քառեակ եւ նորա պարունակած ձայնամիջոցներն ենք փոխում կիսաձայնական դրութեամբ. պարսիկ, փաճիկ եւ արաբ երաժշտութեան մէջ գործածում են նոյնիսկ անգործնական ու անմիտ 1/3, 1/4 ձայններ անգամ: Չափական դրութիւնն էլ այլ է մեր մէջ»:

Նոյնվաճը ուղարկված էր Բեռլինից: Նրապարակված է **Կոմիտաս Վարդապետ** ստորագրությամբ:

Գրքի վրա իբրեւ տպագրության տարեթիվ մաքնանշված է 1896 թվականը, մինչդեռ իրականում այս գիրքը լույս է տեսել 1897 թվականի վերջերին եւ 1898-ի սկզբներին:

«Արարատ», 1898, թ. 3-4, էջ 111-117:

Կոմիտաս, Նոյնվաճներ եւ ուսումնասիրություններ, Ե., 1941, էջ 137-152:

Ապրիլի սկիզբ, Բեռլին - Կոմիտասը նամակ է գրում «Նանդէս ամսօրեայ» պարբերականում 1895 թվականին տպագրված «Նայկական երաժշտութեան նորագիտ դասագիրք մը» վերնագրով հոդվածի հեղինակ Կեսարիո Ս. Դանիել վանքի վանահայր Տրդատ վ. Պալյանին եւ խնդրում է նրան ընդօրինակել «Գիրք երաժշտութեան» ձեռագիրը եւ ուղարկել իրեն:

Կոմիտասը խոստանում է հոգալ ընդօրինակման ծախքը:

«Նանդէս ամսօրեայ», Վիեննա, 1895, թ. 3, էջ 65-68, թ. 4, էջ 123-124

«Գրական թերթ», 1991, թ. 18, մայիսի 28-ի նամակը

Ապրիլի 16, Բեռլին - Կոմիտասը նամակ է գրում «Նանդէս ամսօրեայ» պարբերականի խմբագիր Գ. Մենեիշյանին:

«Վաղուց եմ ստացել,- գրում է Կոմիտասը, - Ձեր առաքած յոդածը (խոսքը Նիկողայոս Մառի գրախոսականի մասին է - Խ. Ս.), դժբախտաբար երկրորդ օրն արդեն ինձ բռնեց մի սաստիկ ջերմ, որ երեք օր առաջ միայն բարեհաճեցաւ իմ այցելութիւնից վերադառնալ: Երեկ բաւական առողջ զգալով թարգմանեցի յօդածի կէտը, որը առաքում եմ նամակին հետ... մնացեալ կէսն էլ մի քանի օրից կ'ուղարկեմ...»

Թարգմանութեան վրացերէն եւ ասորերէն կտորների տեղերը բաց թողի, վասնզի ես չգիտեմ այդ լեզուները»:

Նույն տեղում:

Ապրիլի 18, Բեռլին - Կոմիտասը նամակ է գրում «Նանդէս ամսօրեայ» պարբերականի խմբագիր Գ. Մենեիշյանին:

«Այսօր,-- գրում է նա,-- վերջացրի թարգմանութիւնը (խոսքը Մառի գրախոսականի մասին է - Խ. Ս.) Թղթյակին հետ մեկտեղ առաքում եմ: Նախընթաց նամակովս հայտնելու մոռացած էի, թե՛ հ. Գալուստ Տեր-Մկրտչյանի խոսքերը, որ թարգմանաբար առաջ էր բերել պ. Մառը, ավելի լավ կլինէր նույնիսկ «Արարատից» արտագրվել, թե՛ եւս էլ թարգմանեցի, որպէս Մառն էր ռուսերենի փոխադրել:

Պէտք է ասեմ, որ պ. Մառի լեզուն ո՛չ միայն ծանր, այլեւ բուն, մաքուր ռուսերեն չէ, ուս-

տի շատ մթություններ կային: Ուստի ինչ-ինչ մանր թերություններ եթե պատահեն, ներող կլինեք»:

«Գրական թերթ», Ե., 1991, թ. 18, ապրիլի 18-ի նամակը:

Ապրիլ վերջ, Դրեզդեն - Մի հայ օրհորդի թաղման ծեսը կատարելու համար Կոմիտասը կարճ ժամանակով Բեռլինից մեկնում է Դրեզդեն:

«Գրական թերթ», Ե., 1991, թ. 18, մայիսի 6-ի նամակը:

Ապրիլ, Թիֆլիս - «Մուրճ» ամսագրի հերթական համարում հրատարակվում է Գր. Վանցյանի (նույն թվականի հունվարին գրած) «Եկմալեանի ներդաշնակած պատարագի երգեցողութեանց առթիւ» խորագիրը կրող հոդվածը՝ ուղարկված Բեռլինից:

Տողադակում հոդվածագիրը տեղեկություն է հաղորդում Բեռլինում Եկմալյանի պատարագի մասին [Կոմիտասի] գրելիք հոդվածի վերաբերյալ:

«Մուրճ», 1894, թ. 4, էջ 535:

Ապրիլի վերջ, մայիսի սկիզբ, Բեռլին - Կոմիտասը Տրդատ վ. Պալյանից ստանում է իր գրած նամակի պատասխանը: Վերջինս մերժում է Կոմիտասի ներկայացրած խնդրանքը՝ Կեսարիայի Ս. Դանիելի վանքում հայրնաբերված «Գիրք երաժշտութեան» խորագրով ձեռագրի ընդօրինակումը իրեն ուղարկելու վերաբերյալ: Նամակի շարունակության մեջ Տ. Պալյանը գրում է, որ ինքը եպիսկոպոս ձեռնադրվելու առիթով պետք է «Ս. Էջմիածին գա, այն ժամանակ յուր ձեռագիրը հետը կբերե...»:

«Գրական թերթ», Ե., 1991, թ. 18, մայիսի 28-ի նամակը:

Մայիս 2/20 ապրիլի, Բեռլին - Կոմիտասը գրախանութից գնում է Ռոդեի եւ Շմիդտի հեղինակած «Ուղղեցոյց դպրոցական երգեցողութեան» վերնագրով գիրքը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 880:

Մայիս [1-5], Բեռլին - Կոմիտասը պատասխան նամակ է ստանում Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Գ. Մենեիշյանից:

Նամակում խոսք է եղել Տրդատ Պալյանի հայրնաբերած երաժշտության դասագրքի տպագրության, ինչպես նաեւ Մ. Եկմալյանի «Պատարագի» առիթով Կոմիտասի՝ «Արարարում» հրապարակած հոդվածի մասին:

Նամակը մեզ չի հասել:

«Գրական թերթ», Ե., 1991, թ. 18, մայիսի 8-ի նամակը:

Մայիս 5, Բեռլին - Ֆրեդերիկ Վիլիելմ համալսարանի եւ Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցի ուսանող Կոմիտաս վարդապետը նամակ է գրում Գեորգյան ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին:

Իր այս նամակով հանձին վերջինի Կոմիտասը հոգեւոր ճեմարանի վարչությանը յուրապետակ զեկույց է ներկայացնում ամառային վեցամսյակի ընթացքում համալսարանում եւ երաժշտանոցում իր լսելիք դասախոսությունների մասին:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 89-90:

Մայիսի 6, Բեռլին - Կոմիտասը պապասխան նամակ է գրում Գաբրիել Մենեիշյանին. «Սիրելի Նայր,- գրում է նա, - ես բոլորովին համաձայն եմ Ձեր կարծիքին՝ Տ.[րդապ] Վ-ի գրած դասագրքին տպագրութեան մասին, բայց ցավելով պէտք է հավաստեմ, որ այդպիսի գանձերու վերայ մարդիկ թուխս են նստում... սակայն առանց արդյունքի. «ինքեանք ո՛չ մտնան, եւ որք կամին, ջրոգուն»: Այո՛, ցավալի է, բայց եւ նույնքան իրականություն:

Պապասխանելով Մենեիշյանի առաջադրած հարցերին՝ Կոմիտասը շարունակում է. «Պ. Մ. Եկմալյանի գրուածքը (խոսքը «Պապարագի» մասին է- Խ. Ս.) դեռ շատ խոշոր պակասութիւններ ունի, բայց ես ընթերցող հասարակութեան մարչելի կացուցանելու համար կարճ կապեցի: Այո՛, ես ես պատրաստում եմ, (խոսքը «Պապարագի» մասին է Խ. Ս.) բայց դեռ ուշ պէտք է հրապարակ ելնեմ, վասնզի շատ խոշոր բաներ կան անելու՝ Շարական, Պապարագ եւ Ժամագիրք՝ զրկած եւ մաքրված, եկեղեցական ոճի վերածում, օտարամուտ անճաշակ գեղգեղանքները մկրտում, երաժշտական եւ արեւելյան ոգոյն համաձայն»:

«Գրական թերթ», Ե., 1991, թ. 18, 6-ը մայիսի:

Մայիսի 28, Բեռլին - Կոմիտասը նամակ է գրում Վիեննա՝ Միխայիլյան միաբանության անդամ Գաբրիել Մենեիշյանին: «...ներփակեալ ուղարկում եմ մի փոքրիկ գրութիւն,- ասված է նամակում, - առ խմբագրութեան «Նանդէս ամսօրեայի», եթե արժանի եւ կարելորդ իրավի, խնդրեմ մի փոքրիկ անկիւն շնորհեցեք:

Աշակերտ ժամանակից ի վեր աշխատում էի մեր նախնեաց վեհագոյն դաշնակը վերականգնելու համար, բայց ձեռքիս տակ կային մի քանի այս կամ այն ձեռագրերի մեջ սպրդած կցկտոր ու անկապ նյութեր, որոնք շատ անգամ իրար բոլորովին հակասական պատկեր էին ներկայացնում: Մի ամբողջութիւն կազմակերպող գրութիւն չկար: 1895-ի հանդեսիդ մեջ Տ. վ. Պ-ի հրապարակութիւնն ուրախացրեց մեզ բավականաչափ, գոնե նոր հույս արծարծեց մեր մեջ: Թեւեւ թե արժ. Տ. վ. Պ., թե՛ հանդեսիդ խմբագրութիւնը խոստացած էր այդ խնդրի մասին խորհրդածութիւններ, սակայն իմ համբերութիւնս կարճելով մի նամակ գրեցի Արժ. Տ. վ. Պ.-ին եւ խնդրեցի իմ ծախքով ձեռագիրն ընդօրինակել տալ եւ ինձ ուղարկել, բայց բացասական պապասխան ստացա: Գրում է, թե ինքը եպիսկոպոսութեան վկայական ունի, եթե եպիսկոպոսանալու Ս. Էջմիածին գա, այն ժամանակ յուր ձեռագիրն էլ հետը կբերե»:

«Գրական թերթ», Ե., 1991, թ. 18, մայիսի 28-ի նամակը:

Նույն օրը, Բեռլին - Կոմիտասը Գ. Մենեիշյանին գրած նամակի հետ մեկտեղ «Նանդէս ամսօրեայի» խմբագրությանն է ուղարկում «Արգո խմբագրութիւն» վերնագրով փոքրածավալ մի հոդված:

Սույն հոդվածը գրելուց առաջ Կոմիտասը մի նամակով դիմում է Ս. Դանիելի վանքի վանահայր Տրդատ վարդապետ Պալյանին եւ խնդրում է վերջինիս իրեն ուղարկել «Նանդէս

ամսօրեայում» 1895 թվականին հրատարակած նրա «Նայկական երաժշտության նորագիտ դասագիրք մը» վերնագրով հոդվածի ընդօրինակումը:

Տրդատ Պալյանը, սրանալով Կոմիտասի նամակը, բացասական պատասխան է տալիս նրա խնդրանքին: Չհասնելով ակնկալված արդյունքի՝ Կոմիտասը որոշում է հանդեսի միջոցով իրականացնել իր նպատակադրումը, ուստի գրում է այս հոդվածը եւ դիմում է խմբագրությանը: Իմաստավորելով նորահայտ դասագրքում եղած հոդվածի կարեւորությունը՝ «հոգեւոր դաշնակների վերաստուգութիւնն ու վերահաստատութիւնը, նա եղածը համարում է «շատ կարեւոր խնդիր յուրաքանչիւրի համար եւ ցանկալի եկեղեցական երգեցողության միօրինակութեան առումով»:

Այս նկատառումով խոսքն ուղղելով «արժանապատիվ բնախոյզ Տրդատ վ. Պալյանին»՝ խնդրում է. «Եթե ոչ ձեռագիրն ամբողջությամբ» գոնե մի շարք գլուխները (թվարկում է համարները) մաս առ մաս հանդեսին մեջ հրատարակել, որպեսզի կարող անձինք ուսումնասիրելու նյութ ունենան: Կոմիտասը թվարկում է հոդվածի գլխահամարները: Կոմիտասի ցանկությունը որոշակի դարձնելու նպատակով անհրաժեշտ գրանք նրա թվարկած գլխահամարների հետ մեջ բերել նաեւ վերնագրերը:

Ե. Յաղագս հաղորդակցութեան ձայնից:

Զ. Յաղագս դարձման ձայնից:

Ը. Յաղագս բաժանման ձայնից:

Թ. Յաղագս հեգման ձայնից:

Ժ. Յաղագս Մեթոդոսի երաժշտութեան: («Նանդէս ամսօրեայ», 1895, թ. 3, էջ 65-68):

ԻԲ. Յաղագս մարմնաց՝ եւ անմարմնաց խազից:

ԻԳ. Յաղագս անուանաց խազից:

ԻԵ. Յաղագս խազիցն թէ որպիսի՞ ձայն ունի:

ԻԶ. Յաղագս մեծամեծ խազիցն:

ԻԸ. Յաղագս ձայնի մեծամեծ խազիցն:

ԻԹ. Յաղագս գումարման խազիցն:

Լ. Յաղագս գթութեան խազիցն:

ԽԲ. Յաղագս շարամանութեան ձայնից:

ԽԳ. Յաղագս եղանակագրութեան, այսինքն՝ երգագրութիւն:

ԽԴ. Յաղագս երաժշտականի գիտութեան:

ԽԵ. Յաղագս ձայնական գիտութեան:

ԽԶ. Յաղագս քաջահնար գիտութեանն երաժշտականութեան:

Կոմիտասի հետաքրքրությունը նկատելիորեն մեծ է այդ դասագրքի այս գլուխների նկատմամբ, թերեւս նա կարծում էր, որ այդ հարվածների միջոցով հնարավորություն կստանա հաջողության հասնել խազերի վերձանման գործում:

Անհայտ շարժառիթով հոդվածը «Նանդէս ամսօրեայում» չի տպագրվել:

«Գրական թերթ», Ե., 1891, թ. 18:

«Նանդէս ամսօրեայ», Վիեննա, 1895, թ. 3 էջ 65-68, թ. 4, էջ 123-124:

Մայիս, նույն օրը, Կ. Պոլիս - «Բիրական» լրագրի հերթական համարում «Նասկաքաղ» վերնագրի փակ հրապարակվում է անստորագիր հոդված, որտեղ հապավածաբար մեջ է բերվում Կոմիտասի՝ Մակար Եկմալեանի «Պապարագի» մասին Էջմիածնի «Արարապ» ամսագրում փալագրված հոդվածից մի շարք հապավածներ:

«Արժ. Կոմիտաս Վարդապետը,- ասված է հրապարակման մեջ,- իբրեւ իր քննադատութեան եզրակացութիւն, հայ գեղարվեստական հանճարին պապվաբեր գործ մը կը նկատէ Եկմալեանի երկը»:

«Բիրական», Կ. Պոլիս, 1898, թ. 17, էջ 550-551:

Մայիսի վերջ, հունիսի սկիզբ, Վիեննա - Մխիթարյան միաբանության փալարանում լույս է տեսնում «փալարանի վարիչ» Գրիգոր վարդապետ Գալեմբերյանի «Ակնարկ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան գրական – հրապարակչական գործունեութեան մասին» գերմաներեն գրքույկը:

«Նանդէս ամսօրեայ», 1898, թ. 6, էջ 180:

Նունիս 5, Բեռլին - Կոմիտասը գրախառնութից գնում է Մենդելսոնի «Ամառային գիշերվա երազը» եւ Մոցարտի «Առեւանգումը Սերալից» սպեղծագործությունների կլավիրները:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 1295, 1302:

Նունիս 8, Բեռլին - Կոմիտասը գրախառնութից գնում է «Ռիխարդ Վագներն ու երաժշտական դրաման» եւ Մ. Շապլերի «Էսթերիկա» (1-ին եւ 2-րդ մաս) վերնագրով գերմաներեն գրքերը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 855, 1007:

Նունիս 9, Բեռլին - Կոմիտասը գրախառնութից գնում է Ֆրիկերտի «Երգեցողութեան դասավանդութիւն» վերնագրով գերմաներեն գիրքը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 843:

Նունիս 10, Բեռլին - Կոմիտասը գրախառնութից գնում է Լեբերտի եւ Շպարկի «Դաշնամուրի ձեռնարկ» վերնագրով գերմաներեն գիրքը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 1271:

Նունիս [1 – 10], Բեռլին - Կոմիտասը Վիեննայից ստանում է Գաբրիել վ. Մենելիշյանի գրած նամակը, որտեղ վերջինս Կոմիտասին խնդրում է կատարել իր թարգմանության հետ կապված խմբագրական բնույթի աշխատանք: Նամակի հետ Կոմիտասը ստանում է նաեւ հանդեսի խմբագրության կողմից ուղարկված Գրիգոր վ. Գալեմբերյանի նոր լույս տեսած «Ակնարկ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան գրական – հրապարակչական գործունեութեան մասին» գերմաներեն գրքույկը:

Կոմիտասը կամենում է «մի թերթեակի» թղթափել այդ գրքույկը, «բայց բովանդակութեամբ»

յունը այնքան գրավիչ է լինում եւ «սրտին մոտիկ», որ նա այդ գիրքը կարդում է ամբողջությամբ:

Մենեիշյանի նամակը մեզ չի հասել:

«Գրական թերթ», Ե., 1991, թ. 18, հունիսի 14-ի նամակը:

Նունիս 14, Բեռլին - Կոմիտասը նամակ է գրում Մխիթարյան միաբանության անդամ Գաբրիել Մենեիշյանին՝ տեղյակ պահելով, որ ստացել է նրա ուղարկած նամակը եւ խմբագրության կողմից առաքված Գրիգոր վ. Գալեմբերյանի գերմաներեն գրքույկը: Խնդրում է իր հարգանքը մատուցել վերջինիս նրա «գրավիչ» ու «սրտի մոտիկ» գերմաներեն գրքույկի ընթերցման առիթով:

«Ուրախութիւնս եւ խնդակցութիւնս,- նամակի շարունակության մեջ ավելացնում է Կոմիտասը,- օրավուր ավելանում է՝ տեսնելով հայ տարրը արեւմտյան գիտութեան աստիճանների բարձունքի վերայ համապայծառ սավառնելիս:

Միւրեւի՛ բարեկամ, ես միշտ պատրաստ եմ, որքան ձեռքիցս կգա աջակցելու Ձեր հայրութեան: Խնդրեմ առաքելու կարգադրութիւն անեք, որ ազատ ժամերիս Ձեր թարգմանութեան եւ բնագրի համեմատութիւնը ի գրումի կանեմ»:

Նամակում բերված «Ձեր թարգմանության եւ բնագրի համեմատութիւնը» դարձվածքը վերաբերում է Լեւոն Մսերյանցի «Նայ բարբառախօսութիւն» վերնագրով աշխատության Գ. Մենեիշյանի՝ ռուսերենից կատարած թարգմանությանը, որի խմբագրումը եւ համեմատությունը վերջինիս կողմից հանձնարարված էր Կոմիտասին:

«Գրական թերթ», Ե., 1991, թ. 18, հունիսի 14-ի նամակը:

«Էջմիածին», 2002, թ. Գ - Դ, էջ 87-88:

Նունիս 20, Բեռլին - Կոմիտասը գրախանութից գնում է Մոցարտի «Տիպոս», «Կախարդական սրինգ» եւ «Դոն Ժուան» օպերաների կլավիրները:

ԶԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 1277, 1278, 1256:

Նույիս 5, Բեռլին - Կոմիտասը գրախանութից գնում է Մոցարտի «Առեւանգումը Սերալից» օպերայի կլավիրը եւ Մենդելսոնի «Ամառային գիշերվա երազը»:

ԶԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 1302, 1295:

Նույիս, Վաղարշապատ - «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է Մակար Եկմալյանի «Արարատի» խմբագրությանը ուղղված նամակը՝ ամսագրի մարտ-ապրիլ ամսադրերակում հրապարակված Կոմիտասի «Երգեցողութիւնք սրբոյ պատարագի» վերնագրով քննադատական հոդվածի դեմ:

Կոմիտասը «... երաժշտական այբուբենի հագիւ դեռ կէսը սովորած,- գրում է Մ. Եկմալյանը,- դատողութիւններ է անում երաժշտական այնպիսի գրուածքների մասին, որոնց քննադատելու համար հարկավոր է իմանալ ամբողջ այբուբենը եւ մի բան էլ ասելի, ուստի հարկաւ իւր չգիտեցած բաները նկատելով այդ գրուածքներում նրանց սխալ է համարում:

Մենք,- շարունակում է Եկմալյանը,- ցանկանում ենք, որ մի բանիմաց երաժշտագետ ի

նկարի առնելով այն սահմաններն ու նպատակները, որով ղեկավարել ենք «պարարագի երաժշտությունները» ներդաշնակելիս ասել իր հեղինակաւոր խօսքը մեր աշխարհութեան մասին. սակայն Կոմիտասի երկար հողվածը, թող չցաւի - գուրկ է որեւէ կարեւորութիւնից մեր աչքում»:

Նողվածի փողափայլում ամսագրի խմբագրությունը փալիս է հետեւյալ ծանոթագրությունը. «Ի յարգանս պ. երաժշտագէտի փապագրում ենք այս նամակը, թէա իրօք քննդարութեան դեմ հերքում փալել կարելի եւ պարտաւորեցուցիչ պէտք է լինէր միայն այն ժամանակ, երբ գրքի հեղինակը մի դրական առարկութիւն է առաջ բերում, կամ մի թյուրիմացութիւն ուղղում, եւ ոչ լոկ իր փհաճութիւնն ու արհամարհանքը յայտնում» խմբ.:

«Արարար», 1898, թ. 7, էջ 324:

Նույն օրը, նույն փեղում - «Նոր հրապարակութիւնք» ենթավերնագրի փակ հրապարակվում է հաղորդագրություն Լ. Մ. Չիլինկարյանի «Եռաձայն երգեցողութիւն Ս. Պարարագի» վերնագրով գիրքը Իզմիրում լույս փեսնելու մասին: «Երկար արենէ ի վեր ծանուցուած նոր ձայնագրութեան Ս. Պարարագի մունինք մեր առջեւ,- ասված է անոքացիայի մեջ,- արվեստագէտ՝ պր. Մ. Չիլինկարյան, ավելորդ համարած է Յառաջաբան կամ նոյնիսկ մանր ծանօթութիւն մը, որմէ կարելի ըլլար երկասիրութեան նպատակն ու մեթոդը գուշակել: Բոլոր գործը քաղուած միայն է հայերէն պարարագի երգերէն, - թերեւս առ ի փորձ, քարոզներն ու պարասխաններն առնուած են, իսկ գլխավոր երգերու մէկ մեծ մասը դուրս է թողնուած...»:

Նույն փեղում, էջ 213, 218:

Օգոստոս 2, Բեռլին - Կոմիտասը գրախանութից գնում է Մոցարտի «Ռեքվիեմ» սփեղծագործության կլավիրը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 1301

Նունվար - օգոստոս, Բեռլին - Կոմիտասը Մանուկ Աբեղյանին պատմում է, որ ինքն իր «... պրոֆեսորի միջնորդութեամբ մի քանի անգամ Բեռլինում բեմ է ելել... օպերային խմբի մեջ՝ իբրեւ խորիսար»

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Ե., 1960, էջ 72-73:

Օգոստոս 8, Բեռլին - Կոմիտասը գրախանութից գնում է Նայդի «Տարվա եղանակները» սփեղծագործության կլավիրը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 1299:

[Օգոստոս 10], Բեռլին - Կոմիտասը գրախանութից գնում է Մեյեր Բեյերի «Աֆրիկուիին» խորագրով օպերայի կլավիրը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 1300:

Օգոստոս, սեպտեմբեր, Վիեննա - «Նանդես ամսօրեայ» պարբերականի հերթական համարում հրապարակվում է հանդեսի խմբագիր Գաբրիել Մենեիշյանի հանձնարարականով Կոմիտասի ռուսերենից հայերեն թարգմանած Նիկողայոս Մառի «Գալուստ Տեր Մկրտչեան (Միաբան)»: Ազաթանգեղոսի աղբյուրներից: Յիշարակ դարակնքաց Գորիա եւ Շնոնի վկայից, որ վկայեցին յՈւռնա» վերնագրով աշխատությունը:

«Մեր խնդրանքը հաճեցաւ ռուսերենէ թարգմանել Արժանապատիւ Կոմիտաս Վ.-ն, ի Բեռլին»:

«Նանդես ամսօրեայ», Վիեննա, 1898, թ. 8-9, էջ 267-271,

«Էջմիածին», Է., 2002, թ. 2-3, էջ 85-87:

Սեպտեմբեր 9, Բեռլին - Կոմիտասը գնում է Ն. Բերլինգի «Գործիքագիտութիւն» վերնագրով գիրքը (գերմաներեն):

ԶԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 1003:

Սեպտեմբեր-հոկտեմբեր 10, Բեռլին - Կոմիտասը գալիք տարվա ընթացքում Էջմիածնում Գետրգյան ճեմարանի հիմնադրման 25-ամյակին նվիրված տոնակատարության հանդեսում կատարելու նպատակով «Թե՛ խմբի եւ թե՛ նվագի» համար իրականացնում է «Տէ՛ր, կեցո՛ւ» եւ «Նայրի՛կ, Նայրի՛կ, քո հայրենիք» սպեղծագործությունների գրությունը:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 92:

Նոկտեմբեր 11/29 սեպտեմբեր, Բեռլին - Կոմիտասը նամակ է գրում Գետրգյան ճեմարանի տեսուչ Կ. Կոստանյանին եւ հայտնում է նրան ձմռան վեցամսյակի ընթացքում իր լսելիք դասախոսությունների մասին: Անդրադառնալով իր վերադարձին՝ Կոմիտասը մի քանի նախապատրաստական հանձնարարություններ է անում: Առաջարկում է գնել «մէկ հապ ընտիր ֆիլիարմոնիա», «որովհետեւ,-- գրում է նա,-- ես մտադիր եմ շաբաթական մի քանի անգամ ճեմարանում եկեղեցական երաժշտական հանդես կամ ժողովրդական երաժշտական նուագահանդես եւ երգահանդես տալու»:

Խոսելով ճեմարանի 25-ամյակի տոնակատարության մասին՝ Կոմիտասը խնդրում է, որ Ն. Նովիաննիսյանը «մի բան գրէ այդ առթիւ եւ որքան կարելի է շուտով»: Նամակի շարունակության մեջ Կոմիտասը խնդրում է տեղեկություններ քաղել, թե «Երեսանի նուագախմբի մէջ ինչպիսի գործիքներ են գործածւում, որ ես էլ,-- շարունակում է նա,-- ըստ այնմ նուագարանները յարդարեմ երգ յօրինելիս: Այսպիսով կարելի կլինի մի փառաւոր հանդես տօնել»:

Վերջում խնդրում է հոբելյանական ծրագրից մեկ օրինակ ուղարկել իրեն:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 91-92:

Նոյն շրջանում, Բեռլին - Կոմիտասը Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցում շաբաթական մեկ ժամ լսում է փորձնական դաս երաժշտական «Գործիքագիտութիւն եւ գործիքաւորման ուսուցում»: Միաժամանակ շաբաթական մեկ ժամ փորձնական դաս է տալիս Շմիդտի երաժշտանոցում:

Նոյն տեղում, էջ 91:

Նոկարենքերի վերջ - նոյենքերի սկիզբ, Բեռլին - Գերմանիայում սովորող Կոմի-
պասը, Էջմիածնից ստանում է Ամենայն Տայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի 1898 թվա-
կանի հոկարենքերի 17-ին արձակած կոնդակը:

Կոմիպաս, Նամակներ, Ե., 2000, էջ 75:

Նոյենքեր 17/5, Բեռլին - Կոմիպասը գրախաանության գնում է Օրոնի «Նամըրը Պոպիլիից»
օպերայի կլավիրը:

ՉԱԳԱԹ, Կոմիպասի ֆ. 1306:

Նոյենքեր 19, Բեռլին - Կոմիպասը նամակ է գրում Ամենայն Տայոց կաթողիկոս
Մկրտիչ Խրիմյանին: Նավաստելով հոկարենքերի 17-ին արձակված կոնդակի ստացումը՝
Կոմիպասը Խրիմյանին խնդրում է օգնություն ցույց տալ Վիլհելմսդորֆի ինստիտուտում
սովորող երկու հայ որբերի:

Կոմիպաս, Նամակներ, Ե., 2000, էջ 75-76:

Նոկարենքեր-նոյենքեր, Վիեննա - «Նանդէս ամսօրեայ» պարբերականի հերթական
համարում Գ. Մենելիշյանի ռուսերենից հայերեն թարգմանությամբ լույս է տեսնում Կո-
միպասի խմբագրած Լ. Մսերյանցի «Տայերէն բարբառախօսութիւնը» վերնագրով աշխա-
տությունը:

Ձեռնարկելով Լ. Մսերյանցի գործի թարգմանությունը՝ Գ. Մենելիշյանը դիմում է Կոմի-
պասին եւ խնդրում է խմբագրել իր կապարած թարգմանությունը:

«Սիրելի բարեկամ,- գրում է Կոմիպասը Գ. Մենելիշյանին,- ես միշտ պատրաստ եմ, որ-
քան ձեռքիցս կգայ աջակցելու Ձեր Տայրութեանը: Խնդրեմ առաքելու կարգադրութիւն արեք,
որ ազատ ժամերիս Ձեր թարգմանութիւնը եւ բնագրի համեմատութիւնը ի գրումի անեմ»:

Գրքի առաջաբանում թարգմանիչ Գ. Մենելիշյանը այլեւայլ բացատրությունների հետ
հարկ է համարել անդրադառնալ եւ իր գոհունակությունը հայտնել Կոմիպասին. «...Քանի
որ մեզ համար,- գրում է նա,- կարեւորագույն լեզուի՝ ռուսերենի ուսումնառումն էր, չխորշեցանք
մեր բարեկամաց աջակցութեան դիմելու, որոնք սիրայօժար յանձն առին մեր թարգմանութ-
իւնը աչքէ անցցնելու եւ իրենց կարեւոր դիպողություններն ընելու: Ի մասնաւորի Էջմիածնի
միաբան Սողոմոն Կոմիպաս վարդապետին կայարներք հրապարակաւ մեր ջերմ շնորհա-
կալութիւնը»:

«Նանդէս ամսօրեայ», Վիեննա, 1898, թ. 10-11, էջ 306-313:

«Էջմիածին» Է., 2002, թ. 2-3, էջ 87-88:

Մսերյանց Լեւոն, Տայերէն բարբառախօսութիւն,
Վիեննա, 1899, «Յառաջաբան», էջ Զ-Է:

Նոյենքեր 25/6 դեկարենքերի, Բեռլին - Կոմիպասը նամակ է գրում Սիրելեան
Տիգրանյանին՝ Էջմիածին: Տեղյակ պահելով, որ ստացել է նրա եղբոր՝ Նիկողայոս
Տիգրանյանի աշխատություններից մի քանիսը՝ խոստանում է մեկական օրինակ
վերապահելով իրեն՝ մնացյալները մատուցել «ծանօթ ուսուցչապետերին»:

«Սրբանց յառաջադիմութիւն եմ ցանկանում Ձեր եղբոր բռնած դիրքին,-

շարունակության մեջ գրում է նա,- ժողովրդական անգին եղանակների գանձարանը օրարների ուշադրության յանձնելով: Ողջունեցեք իմ կողմից...»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 173:

Նոկտեմբեր-նոյեմբեր, Բեռլին - Կոմիտասը լուսանկարվում է աշնանային համազգեստով, լայնեզր գլխարկով, ձախ թեքված, աջ ձեռքը կախված վիճակում, ձախը գրպանում:

Թ. Ազատեան, Կոմիտաս վարդապետ, հ. I, Կ. Պոլիս, 1931, էջ 26:

«Խորհրդային արվեստ», Ե., 1933, թ. 8-9, էջ 25:

Դեկտեմբեր 7, Բեռլին - Կոմիտասը նամակ է գրում Գեորգյան ճեմարանի տեսուչ Կ. Կոստանյանին: Ճշտելով Գերմանիայում իր ապրած ամիսների քանակը՝ Կոմիտասը հաշվելու է լինում, թե երբվանից է գտնվում Բեռլինում եւ որքան ժամանակ դեռեւս պետք է մնա, որպեսզի կարողանա ստանալ երաժշտական հիմնավոր գիտելիքներ:

«Բարձրագույն երաժշտութիւնը,- գրում է նա, - կամ գեղարվեստական երաժշտութիւնը սկսելու եմ դեռ 3-րդից, առանց որի եկեղեցական եղանակները կարգի բերելն ու բարեկարգելը գրեթե անհնար է. դեռ այս ամսի վերջին կամ թէ մյուսի սկզբին եմ ազատուելու չոր ու ցամաք կանոնների ճանկից եւ ապա ազատ երաժշտութիւն սկսելու: Սա արդեն պարմութիւն չէ, որ գրեցից սովորի մարդը, այլ գործնական վարժութեամբ առանց սորա, ես, իբրեւ երաժիշտ, միանգամայն անպետք կլինեմ:

Ներգրության մեջ Կոմիտասը շարունակում է. «Այն, ինչ որ ես այս կարճ ժամանակում կարարեցի սորա մէկ տասներորդը չէր կարարել 5 տարուան ընթացքում իմ նախնին»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 93:

Տարվա ընթացքում, Բեռլին - Կոմիտասը ձայնագրում է Ավ. Իսահակյանի «Դարդս լացէք, սարի՛ սմբուլ» խորագրով երգը:

Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. IV, Ե., 1976, էջ 192-193: